ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՐԻ ՏՕՆԸ

Կաղզուան, 27 փետրուարի

Ուսուցչական խմբի ձեռնարկութեամբ՝ ամսոյս 24-ին, հայոց դպրոցի դահլիճում, կայացաւ՝ տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400 ամեայ յօբելեանական հանդէսը։ Դահլիճը զարդարուած էր գիրն ու գրականութիւնը տարածող մեծ մարդկանց նկարներով. պատերից կախուած կար Ու-րա-ար-տուն իր հին տառերով և զանազան այլ գրուածքներ, որոնց աշխատութեան համար շնորհակալութեան արժանի էր դպրոցիս ու. ուս. պ. Մ. Եղիկեանը։

Հանդէսը բացուեց «Մեր հայրենիք» երգով, որից յետոյ խօսեց պ. Եղիկեանը հայ ազգի ծագման, նրա ապրած միջավայրի, անցկացրած քաղաքական պայմանների և մտաւորականութեան մասին, առաւելութիւն տալով չորրորդ դարի հայ մտքին, որի արտադրութիւնն էր տառերի գիւտը. պարոնը խօսեց մօտ $1\frac{1}{2}$ ժամ և արժանացաւ ծափահարութեան։

Իսկ տպագրութեան գիւտի առթիւ խօսեց Ներսէս քահանայ Տէր Ներսիսեանը՝ ցոյց տալով նրա հոյակապ օգուտները, գիրն ու գրականութիւնը տարածելու մէջ։ Օրուայ պատշաճի ընտրուած գեղեցիկ ոտանաւորները արտասանուեցին շատ յաջող. մէջ ընդ մէջ երգում էր քառաձայն խումբը ղեկավարութեամբ պ. պ. բժ. Բաղդասարեանի և Գ. Սագինեանի։ Վերջում ի ցոյց դրուեց Մ. և Ս. գրողների կենդանի պատկերը։

Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր երկսեռ բազմութեամբ։ Տեղ չլինելու պատճառով շատերը զրկուեցին հանդէսից, որ տեւեց $3\frac{1}{2}$ ժամ։ Հասարակութիւնը ցրուեց գոհ սրտով։

Սանասար